

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ

13 մայիսի, 2020 N 17

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ի N 16  
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրի 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով՝ **որոշում եմ**.

1. Արցախի Հանրապետության Պարետի 2020 թվականի մայիսի 12-ի «Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանում կիրառվող ժամանակավոր սահմանափակումների մասին» N 16 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները.

1) որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետում վերջակետը փոխարինել միջակետով.

2) որոշման 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ և 7-րդ ենթակետերով.

«6) Շահումյանի շրջանի համայնքների վարչական սահմանների միջև սահմանափակել բնակչության ազատ տեղաշարժը, այդ նպատակով արգելել համայնքների բնակիչների և տրանսպորտային միջոցների երթևեկությունը Չարեքտար-Նոր Խարխափուտ և Քարվաճառ-Նոր Գետաշեն ավտոճանապարհներով.

7) սույն կետի 6-րդ ենթակետով նախատեսված սահմանափակումից բացառություն է արվում սույն որոշման հավելվածով սահմանված տեղեկությունները պարունակող՝ Շահումյանի շրջանի վարչակազմի ղեկավարի կողմից տրամադրված թերթիկի առկայության և Պարետի ցուցումով՝ բացառիկ այլ դեպքերում:».

3) որոշումը լրացնել հավելվածով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հավելված  
Պարենի 2020 թվականի  
մայիսի 13-ի N 17 որոշման

«Հավելված  
Պարենի 2020 թվականի  
մայիսի 12-ի N 16 որոշման

<b>Տեղաշարժման թերթիկ</b>	
« ----- » մայիսի 2020թ.	
<b>Անուն, ազգանուն</b>	
<b>Ելքի օր</b>	
<b>Ելքի հասցե</b>	
<b>Այցելության վայրի հասցե և անվանում</b>	
<b>Այցելության նպատակը</b>	
<b>Վերադարձի ակնկալվող ժամը</b>	
<b>ԱՀ Շահումյանի շրջանի վարչակազմի ղեկավար _____</b>	

»: